ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը սեպտեմբերի 2019թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 30

/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

N 43 – Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 13.09.2019թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

2. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

3. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. թիվ 38-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը սեպտեմբերի 2019թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.08.2019Թ. ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 30

/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ն 44– Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. 22.08.2019թ. Ն 37-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

<<Հիմք ընդունելով անշարժ գույքի նվիրաբերության 21.08.2013թ. ՍՄ 2709 պայմանագրի 4.3 կետը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի 6-րդ կետի դրույթներով ինչպես նաև նկատի ունենալով, որ <<Աշտարակ>> նոտարական տարածքի նոտար Գագիկ Հակոբյանի կողմից 21.08.2013թ. վավերացված ՍՄ 2709 պայմանագրի 1.3 կետով նախատեսված ծրագրերը չեն կատարվել, անշարժ գույքի հանձնումը փաստացի չի ավարտվել: <<Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոնը>> չունի բավարար ֆինանսական միջոցներ նվիրաբերված գույքը պայմանագրով սահմանված նշանակությանը համապատասխան օգտագործելու համար, ինչի հետևանքով չի վարվել նշված գույքի օգտագործման հետ կապված բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ: Իր կողմից գույքի ըստ նշանակության օգտագործումը անհնար է, նվիրաբերված գույքի նկատմամբ որևէ բարելավում չի կատարվել, գույքի սկզբնական վիճակը պահպանված է և վերջինս առարկություններ չունի պայմանագրի լուծման հետ կապված, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1.Լուծել Աշտարակ քաղաքի Էջմիածնի խճուղի Ն 6 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0410-0110/ 4,8 հա բնակավայրերի նշանակության հողամասի նկատմամբ Աշտարակի քաղաքապետարանի և <Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն> հասարակական կազմակերպության միջև 21.08.2013թ. կնքված անշարժ գույքի նվիրաբերության /ՍՄ 2709/ պայմանագիրը:

2. Սույն որոշման 1-ին կետից բխող իրավական ակտերի ընդունումը վերապահել համայնքի ղեկավարին>>:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

ԱԶԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ	**ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13-ը սեպտեմբերի 2019թ.

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.08.2019Թ. ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 30

/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

N 45– Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. <<02-001-0410-0110 ծածկագրով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին>> N 38-Ա որոշման մեջ ավելացնել 3-րդ կետ հետևյալ խմբագրությամբ.

<<3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 21.08.2013թ.-ին անշարժ գույքի նվիրաբերության /ՍՄ 2709 /պայմանագիրը լուծելուց և պետական գրանցում ստանալուց հետո>>:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 8 ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ	**ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**